



Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը և դրա ներմուծումը ՀՀ իրավական համակարգ

Նարինե Մելիքյան
Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի տնօրեն

Շնորհակալություն ենք հայտնում Արսեն Նազարյանին և Տիգրան Կարապետյանին նյութի վերաբերյալ իրենց արժեքավոր դիտարկումների համար:

2022թ.-ի հուլիսի մեկից ուժի մեջ է մտել ՀՀ քրեական նոր օրենսգիրքը, իսկ 2023թ.-ի հունվարի մեկից սկսեցին գործել դրա՝ իրավաբանական անձանց համար քրեական պատասխանատվություն նախատեսող դրույթները:

Ներածություն

Ինչպես համաշխարհային, այնպես էլ ազգային տնտեսությունների հիմքն իրավաբանական անձինք են: Դրանց որոշումները որոշիչ նշանակություն ունեն ոչ միայն տնտեսական կյանքի, այլև սոցիալական, բնապահպանական, քաղաքական և այլ ոլորտների համար: Իրավաբանական անձանց շահերը կարող են սպասարկվել ինչպես օրինավոր, այնպես էլ հանցավոր եղանակներով, այդ թվում՝ կոռուպցիոն դրսևորումների միջոցով: Իրավաբանական անձանց կառավարման բարդ կառուցվածքները և հավաքական որոշումների կայացման գործընթացները կարող են դժվարացնել հանցագործությունների բացահայտումն ու հետապնդումը: Անմիջական կատարողները կամ սադրիչները կարող են թաքնվել «կորպորատիվ շղարշի» հետևում և խուսափել պատասխանատվությունից: Նման իրավիճակում օրինաչափ է թվում քրեական օրենսդրության տարածումը ոչ միայն ֆիզիկական, այլև իրավաբանական անձանց վրա: Ֆիզիկական անձանց պատժելը, եթե նրանք նույնիսկ ավագ ղեկավարության ներկայացուցիչներ են, բավարար զսպող միջոց չէ հանցավոր մտադրություններ ունեցող իրավաբանական անձանց համար:

Մի փոքր պատմություն

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասին դրույթները գրեթե միաժամանակ ի հայտ են եկել ընդհանուր իրավունքի դասական ներկայացուցիչներ Մեծ



Բրիտանիայում և ԱՄՆ-ում, ինչը պայմանավորված էր այս երկրների տնտեսական զարգացման արագ տեմպերով:

Նիդեռլանդները մայրցամաքային իրավական համակարգի առաջին երկիրն էր, որն ընդունեց այդ նորամուծությունը և արդեն 1950թ.-ին իրավաբանական անձանց համար նախատեսեց քրեական պատասխանատվություն:

Մայրցամաքի մյուս երկրները երկար ժամանակ հետևում էին «ընկերությունը չի կարող պատասխանատվություն կրել» (societas delinquere non potest) սկզբունքին, որը բացառում է գաղափարը, թե իրավաբանական անձը կարող է հանցագործություն գործել և դրա համար ենթարկվել պատասխանատվության: Միաժամանակ, այդ երկրներում իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվում էր վարչական պատասխանատվության ինստիտուտը:

Իրավիճակը կտրուկ փոխվեց վերջին երեք տասնամյակներում: Այսօր եվրոպական երկրների մեծ մասը, իսկ աշխարհի երկրների 1/3-ը որդեգրել է կորպորատիվ քրեական պատասխանատվության հայեցակարգը¹:

Տեսական ակնարկ

Պատմականորեն Մեծ Բրիտանիայի քրեական իրավունքը բացառում էր իրավաբանական անձանց կողմից հանցագործություն կատարելու և դրա համար պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը՝ «կորպորացիան հոգի չունի», «դատապարտյալը պարտավոր է անձամբ ներկա լինել դատարանում» պատճառաբանություններով: Այնուամենայնիվ, 19-րդ դարի կեսերին բրիտանական դատարանները փոխեցին իրավաբանական անձանց պատասխանատվության վերաբերյալ իրենց մոտեցումները:

Մեծ Բրիտանիայում ձևավորվեց և լայն կիրառում ստացավ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության նույնականացման կամ alter ego-ի տեսությունը, որի բովանդակությունը հանգում է հետևյալին՝ իրավաբանական անձի միայն բարձրաստիճան պաշտոնատար անձանց գործողությունները, անգործությունը և հոգեվիճակն են ընկալվում որպես իրավաբանական անձի գործողություն կամ հոգեվիճակ, այլ կերպ ասած՝ ղեկավար անձի կամքն իրավաբանական անձի կամքն է: Եթե հանցագործությունը կատարվում է պաշտոնատար անձի կողմից ի շահ իրավաբանական անձի, ապա իրավաբանական անձը պատասխանատվության է ենթարկվում որպես կատարող, իսկ այն դեպքում, երբ ղեկավար անձը հանդես է եկել որպես օժանդակող, ապա իրավաբանական անձը պատասխանատվության պետք է ենթարկվի հանցագործությանն օժանդակության համար:

¹ OECD Anti-Corruption Network for Eastern Europe and Central Asia. Liability of Legal Persons for Corruption in Eastern Europe and Central Asia. 2015.



Այսինքն՝ իրավաբանական անձի ղեկավար անձնակազմի գործողությունները նույնացվում են հենց իրավաբանական անձի գործողությունների հետ:

Նույնականացման տեսության հիմնադրույթներն իրենց արտահայտությունը գտան 1957թ.-ին ընդունված դատական որոշմամբ, որում դատավոր Լորդ Դեննինգը կորպորացիան համեմատում է կենդանի էակի հետ՝ նշելով, որ այն նույնպես ունի ուղեղ, նյարդային կենտրոններ, որոնք կառավարում են դրա գործողությունները, ինչպես նաև ձեռքեր, որոնք գործում են կենտրոնական նյարդային համակարգի հրամաններով: Հասարակ աշխատակիցները կորպորացիայի ձեռքերն են, որոնք կատարում են «սև» աշխատանքը, սակայն պատասխանատու չեն դրա գիտակցության և կամքի համար: Այլ է իրավիճակը, երբ խոսքը տնօրինության՝ կորպորացիայի ղեկավար անձնակազմի մասին է, որը հանդիսանում է կորպորացիայի ուղեղը և կառավարում է այն: Միայն ղեկավար անձնակազմը կարող է նույնականացվել իրավաբանական անձի հետ²: Նույնականացման տեսությունը մեծ ազդեցություն է ունեցել ամբողջ աշխարհում իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտի զարգացման վրա:

20-րդ դարի կեսերից Միացյալ Նահանգներում դատարանները որոշումներ կայացնելիս սկսեցին ղեկավարվել սուբսիդիար պատասխանատվության տեսությամբ (այլ կերպ ասած՝ այլ անձի փոխարեն պատասխանատվության տեսություն), որի համաձայն՝ իրավաբանական անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել իր ցանկացած գործակալի (այդ թվում՝ իր ղեկավարի, աշխատակցի) գործողության համար:

Քննարկվող տեսության հիմքում ընկած է Էլկինսի օրենքը (Elkins Act, 1903), ըստ որի՝ իր լիազորությունների շրջանակներում գործող գործակալի գործողությունները և անգործությունը պետք է համարվեն կորպորացիայի գործողություն և անգործություն: Այսինքն՝ քննարկվող տեսության համաձայն՝ կորպորացիան կարող է պատասխանատվություն կրել իր ցանկացած գործակալի ցանկացած գործողության համար, որը վերջինս կատարում է իր լիազորությունների շրջանակներում՝ ելնելով իրավաբանական անձի շահերից, ընդ որում, գործակալի զբաղեցրած դիրքը որևէ նշանակություն չունի:

Վերը քննարկված տեսություններն ունեն իրենց առավելություններն ու թերությունները: Նույնականացման տեսությունը, սահմանելով նույնականացման ենթակա անձանց կոնկրետ շրջանակը, մի կողմից հեշտացնում է իրավակիրառ գործունեությունը, քանի որ այս տեսության շրջանակներում հստակ կերպով կանխորոշված են այն սուբյեկտները, որոնց

² Սրբուհի Գալյան, Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմնական մոդելները արտասահմանյան երկրներում, http://publications.yso.am/wp-content/uploads/2016/06/29Srbuhi_Galyan.pdf:



կողմից կատարված հանցագործությունը կարող է մեղսագրվել իրավաբանական անձին: Մյուս կողմից այս մոդելն անչափ նեղացնում է նույնականացման ենթակա անձանց շրջանակը, քանի որ կորպորացիաները շատ բարդ կառույցներ են՝ ծանրաբեռնված կոլեկտիվ որոշումների կայացման գործընթացներով, որոնցում բարձրաստիճան ղեկավարներից բացի, ներգրավված են նաև բազմաթիվ այլ անձինք: Այդ իսկ պատճառով, երբ կատարվում է կորպորատիվ հանցանք, հաճախ շատ դժվար է նույնականացնել հանցանք կատարած անձին, և որքան մեծ է ընկերությունը, այնքան հավանական է, որ նույնականացման տեսության շրջանակներում նա կարող է խուսափել պատասխանատվությունից:

Այսպիսով, արդյունավետության տեսանկյունից նույնականացման տեսությունը չափազանց սահմանափակ է, իսկ սուբսիդիար պատասխանատվությանն՝ անչափ լայն: Այդ է պատճառը, որ փորձ արվեց գտնելու նոր՝ առավել արդյունավետ տարբերակներ: Արդյունքում ի հայտ եկան այլընտրանքային մոտեցումներ:

Նույնականացման տեսությունն ընդլայնվեց, որպես իրավաբանական անձի պատասխանատվության հիմք դիտվեց նաև ղեկավարության կողմից աշխատակիցների նկատմամբ վերահսկողության բացակայությունը: Մեկ այլ այլընտրանքային տեսության հիմքում ընկած է այն համոզմունքը, որ ընկերության գործողությունները չպետք է նույնացվեն ֆիզիկական անձի գործողությունների հետ: Այս տեսությամբ փորձ է արվում տարանջատել կորպորատիվ պատասխանատվությունը ֆիզիկական անձանց պատասխանատվությունից՝ այն սահմանելով կազմակերպական մեղքի տեսանկյունից: Այսպես՝ կազմակերպական մեղքի տեսության համաձայն՝ իրավաբանական անձը կարող է պատասխանատվության ենթարկվել նաև այն բանի համար, որ դրանում հանդուրժվում կամ թույլատրվում է օրենքի չպահպանումը կամ շրջանցումը, իսկ որոշ դեպքերում պատասխանատվությունը կարող է վրա հասնել նաև այն բանի համար, որ իր աշխատակցի կատարած հանցավոր արարքի մասին իրավաբանական անձն իմացել, սակայն լռել է:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմնական մոդելները

Ներկայումս գոյություն ունեն իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հետևյալ չորս հիմնական մոդելները³

1. Նույնականացման մոդելը, որի շրջանակներում ղեկավար անձի գործողությունները նույնականացվում են ընկերության գործողությունների հետ, այսինքն՝

³ Совместный проект Европейского Союза и Совета Европы «Защита прав предпринимателей в Российской Федерации от коррупционных практик». Технический документ: Сравнительный анализ ответственности юридических лиц (корпоративной ответственности) за преступления коррупционной направленности. 2015.



իրավաբանական անձի պատասխանատվության համար կարող է հիմք ծառայել այն հանցանքը, որը կատարել է ընկերության ղեկավար օղակում ընդգրկված կամ ներկայացուցչական լիազորություններ ունեցող անձը:

2. Ընդլայնված նույնականացման մոդելը, որի դեպքում բացի նույնականացման տեսությամբ պատասխանատվության առաջացման հիմնական հատկանիշներից, իրավաբանական անձի պատասխանատվության հիմք կարող է ծառայել նաև ղեկավար օղակի կողմից իր աշխատակիցներին/գործակալներին վերահսկելու անկարողությունը («վերահսկողության բացակայության կանոն»), որի հետևանքով ծագել է ի շահ ընկերության և նրա անունից իր լիազորություններն իրականացնելիս աշխատակցի կողմից իրավախախտում կատարելու հնարավորությունը:
3. Մուբսիդիար պատասխանատվության կամ պատասխանատվության փոխարինման մոդելը, որի դեպքում իրավաբանական անձի պատասխանատվության համար հիմք կարող է ծառայել այն հանցանքը, որը կատարվել է ընկերության աշխատակցի կամ գործակալի կողմից իր լիազորությունների շրջանակում և ընկերության շահերից ելնելով: Ի դեպ, աշխատակցի զբաղեցրած պաշտոնը չունի էական նշանակություն: Այս մոդելը հայտնի է նաև «գործատու – աշխատակից» անվամբ:
4. Կազմակերպական մոդելը, որի շրջանակում իրավաբանական անձի պատասխանատվությունը սահմանվում է՝ ելնելով իրավաբանական անձի կորպորատիվ մշակույթի/կառավարման թերություններից: Մոդելն այլ կերպ անվանում են «օբյեկտիվ պատասխանատվություն», որին համապատասխան իրավաբանական անձը կարող է պատասխանատվության ենթարկվել բավարար կանխարգելիչ կառուցակարգերի և իրավական համապատասխանության միջոցների բացակայության պատճառով: Այս մոդելի վրա հիմնված իրավական համակարգերում պարտադիր չէ ապացուցել ֆիզիկական անձի մեղքը: Հետևաբար, կարելի է համարել, որ հանցանքը փաստացի կատարողների անձնական պատասխանատվությունը սահմանելիս բավարար ուշադրություն չի հատկացվում անփութության գործոնին: Մոդելի մեկ այլ թերություն է հանցանքը կանխարգելելու բավարար մշակույթի բացակայության վերաբերյալ անհրաժեշտ փաստարկների ներկայացումը, որը բարդ խնդիր է հատկապես խոշոր ընկերությունների դեպքում, որոնք կարող են պաշտպանվել՝ ներկայացնելով իրենց հակակոռուպցիոն ծրագրերը և դրանցից բխող կանխարգելիչ միջոցառումները՝ շրջանցելով դրանց գործնական կիրառման փաստարկները:



Հարկ է նշել նաև, որ քննարկված բոլոր մոդելների համաձայն՝ իրավաբանական անձինք պատասխանատվության չեն ենթարկվում պատասխանատու անձի կողմից կատարված հանցանքի համար, եթե դա կատարվել է տվյալ անձի մասնավոր շահերից ելնելով:

«Իրավաբանական անձ» հասկացության սահմանման մոտեցումները

Իրավաբանական անձանց նկատմամբ քրեական պատասխանատվության կիրառման շրջանակներում «իրավաբանական անձ» եզրույթը սահմանելու մոտեցումները տարբերվում են ըստ երկրների:

Երկրների մեծ մասում եզրույթը սահմանվում է քաղաքացիական կամ առևտրային իրավունքում և կիրառվում քրեական օրենսդրության շրջանակներում:

Մեկ այլ մոտեցում է իրավաբանական անձի սահմանման ամրագրումը քրեական օրենսդրությամբ: Օրինակ՝ «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասին» Մոնտենեգրոյի օրենքը բովանդակում է կորպորատիվ պատասխանատվության ենթակա անձանց հետևյալ ցանկը՝ «Իրավաբանական անձ՝ ընկերություն, օտարերկրյա ընկերություն և օտարերկրյա ընկերության մասնաձյուղ, պետական ձեռնարկություն, պետական հիմնարկ, տեղական և օտարերկրյա հասարակական կազմակերպություններ, ներդրումային հիմնադրամ, այլ հիմնադրամներ (բացառությամբ բացառապես պետական լիազորություններ իրականացնող հիմնադրամների), սպորտային կազմակերպություններ, քաղաքական կուսակցություններ, ինչպես նաև այլ ասոցիացիաներ կամ կազմակերպություններ, որոնք իրենց գործունեության ընթացքում անընդհատ կամ պարբերաբար ստանում կամ ձեռք են բերում գույք և տնօրինում են այն»⁴:

Լատվիայի օրենսդրությամբ իրավաբանական անձանցից բացի, քրեական պատասխանատվություն կարող է կիրառվել իրավական կարգավիճակ չունեցող միավորումների նկատմամբ, քանի որ դրանք ևս կարող են ներգրավվել կամ օգտագործվել հանցավոր, այդ թվում՝ կոռուպցիոն սխեմաներում⁵:

Շատ երկրներում քրեական իրավունքը հավասարապես չի կիրառվում իրավաբանական անձանց բոլոր կատեգորիաների նկատմամբ: Մովորաբար, քրեական պատասխանատվությունը չի տարածվում պետության, տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց մարմինների վրա: Որոշ երկրներում այս ցանկը համալրվում է միջազգային կազմակերպություններով: Այս մոտեցումը բխում է Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի ԵԽ կոնվենցիայով նախատեսված «իրավաբանական անձ» եզրույթի

⁴ <https://www.yumpu.com/en/document/read/38526362/law-on-criminal-liability-of-legal-entities>.

⁵ <https://www.warnathgroup.com/wp-content/uploads/2015/03/Latvia-Criminal-Code.pdf>.



պատասխանատվությունից՝ հիմնախնդրի կարգավորումը տալիս է ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, համաձայն որի՝ իրավաբանական անձանց վերականգնակերպման արգելքն՝ ի թիվս այլ միջոցների, նախատեսված է որպես ապահովման միջոց՝ դատական վարույթի շրջանակում իրավաբանական անձի պատշաճ վարքագիծը երաշխավորելու նպատակով:

Հարկ է ավելացնել, որ ՀՀ քրեական օրենսգիրքը տեղական և օտարերկրյա իրավաբանական անձանց նկատմամբ նախատեսում է որոշակի առանձնահատուկ կարգավորումներ:

Օրինակ, եթե ՀՀ-ում ստեղծված իրավաբանական անձի կատարած հանցանքն ուղղված է եղել ՀՀ սահմաններից դուրս, ապա այդ հանցանքի համար իրավաբանական անձը պատասխանատվության է ենթակա տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով: Իսկ, եթե տվյալ երկրի օրենսդրությամբ իրավաբանական անձանց համար քրեական պատասխանատվություն սահմանված չէ, ապա վերջինս կարող է պատասխանատվության ենթարկվել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կարգով: Այս իրավակարգավորումը նպատակ է հետապնդում խուսափել անձին միևնույն հանցանքի համար կրկնակի պատասխանատվության ենթարկելուց:

Ինչ վերաբերում է օտարերկրյա պետությունում ստեղծված իրավաբանական անձին, ապա վերջինս ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով քրեական պատասխանատվության կենթարկվի միայն այն դեպքում, եթե օտարերկրյա պետությունում քրեական պատասխանատվության չի ենթարկվել տվյալ հանցագործության համար, և կատարված հանցագործությունն ուղղված է եղել հետևյալ անձանց շահերի դեմ՝

- 1) ՀՀ-ի և/կամ
- 2) ՀՀ քաղաքացու և/կամ
- 3) ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի և/կամ
- 4) ՀՀ-ում ստեղծված իրավաբանական անձի և այլ կազմակերպությունների:

Իրավաբանական անձի պատասխանատվության ծագման հիմքերն ու պայմանները

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի՝ իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե՝

- 1) հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ այդպիսի անձի թողտվությամբ կամ դրդմամբ իրավաբանական անձին ներկայացնող անձի



կողմից՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով և ի շահ իրավաբանական անձի գործելով,

- 2) իրավաբանական անձի կողմից չի ապահովվել դրա գործունեությունը կարգավորող օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված պարտականությունների կատարումը, որը հանգեցրել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի, իրավաբանական անձին ներկայացնող անձի կամ իրավաբանական անձի աշխատողի կողմից հանցանքի կատարմանը,
- 3) հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով կամ իրավաբանական անձի միջոցով (այն օգտագործելով):

Ներկայացված իրավակարգավորումից հետևում է, որ քրեական պատասխանատվության ծագման էական պայմաններն են՝

- ֆիզիկական անձը, որի կողմից կատարված իրավախախտումը հանգեցնում է իրավաբանական անձի քրեական պատասխանատվությանը,
- պատասխանատու ֆիզիկական անձի և իրավաբանական անձի գործունեության միջև կապը,
- պատասխանատու ֆիզիկական անձի վարքագիծը,
- իրավական համապատասխանությունն ապահովելու իրավաբանական անձի կարողությունը:

Պատասխանատու անձ

Ֆիզիկական անձին, որի գործողությունները կարող են մեղսագրվել իրավաբանական անձին և դրա համար առաջացնել քրեական պատասխանատվություն, պայմանականորեն կարելի է կոչել «պատասխանատու անձ»:

Գոյություն ունի պատասխանատու անձի սահմանման երկու մոտեցում՝ ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ: Առաջինը պատասխանատու անձին բնութագրում է բարձրագույն ղեկավարությունում՝ կառավարման մարմիններում ներգրավվածության, իսկ երկրորդը՝ անձի պարտականությունների միջոցով: Կա նաև երրորդ՝ հիբրիդային տարբերակը, որը ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ սահմանումների չափանիշների համադրությունն է:



Պատասխանատու անձի ֆունկցիոնալ սահմանում է տրված օրինակ՝ Մոնտենեգրոյի օրենսդրությամբ: Այն հանգում է հետևյալին. «Ֆիզիկական անձ, ով իրավաբանական անձում կատարում է որոշակի պարտականություններ, իրավասու է հանդես գալ իրավաբանական անձի անունից, և ողջամտորեն ընկալվում է, որ նա լիազորված կլինի հանդես գալ իրավաբանական անձի անունից: Պատասխանատու անձ է համարվում նաև իրավաբանական անձի անունից որպես բաժնետեր հանդես եկող ֆիզիկական անձը»⁷:

Նշված սահմանման առավելություններից է զարգացող շուկաների կորպորատիվ կառավարման պրակտիկայի առանձնահատկությունների արտացոլումը, համաձայն որոնց՝ սեփականատերերը կամ հիմնական բաժնետերերը հաճախ ներգրավված են կառավարման գործընթացում, նույնիսկ երբ նրանք փաստացիորեն ներկայացված չեն ընկերության կառավարման կամ վերահսկման մարմիններում:

Սահմանման մյուս առավելությունն է պատասխանատու անձի բնութագրումն արտաքին աշխարհի տեսանկյունից, այսինքն՝ պատասխանատու է ճանաչվում անձը, որն արտաքին շահակիցների տեսանկյունից կարող է ողջամտորեն ընկալվել որպես ընկերության ներկայացուցիչ: Սա կարող է դժվարացնել հանցավոր մտադրություն ունեցող իրական պատասխանատուին թաքցնելու փորձերը:

Այսպիսով, պատասխանատու անձանց ցանկը, որոնց գործողությունների համար իրավաբանական անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, ներառում է ոչ միայն բարձրագույն ղեկավարությանը, այլև ցանկացած անձի, ով իրավասու է հանդես գալ իրավաբանական անձի անունից: Այլ կերպ ասած՝ կորպորատիվ հիերարխիայում պատասխանատու անձի զբաղեցրած դիրքով պայմանավորված իրավական հետևանքների միջև տարբերություններ չեն դրվում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ընտրված է պատասխանատու անձի հիերիդային սահմանումը: Եզրահանգումը բխում է իրավաբանական անձի քրեական պատասխանատվության հիմքերի վերաբերյալ իրավակարգավորումից, համաձայն որի՝ պատասխանատու անձ է համարվում՝

1. իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձը,
2. իրավաբանական անձին ներկայացնող անձը:

ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով՝ իրավաբանական անձին ներկայացնող անձը կարող է լինել ցանկացած անձ, որը որևէ ակտի հիման վրա (օրինակ՝ օրենքի, պայմանագրի, տվյալ

⁷ <https://www.yumpu.com/en/document/read/38526362/law-on-criminal-liability-of-legal-entities>.Yn



իրավաբանական անձի կանոնադրության, կորպորատիվ որոշման, հատուկ լիազորության և այլն) ստանում է լիազորություն ներկայացնել իրավաբանական անձին: Այսպիսով, իրավաբանական անձին ներկայացնող անձ կարող է համարվել ինչպես բարձրագույն ղեկավարության ներկայացուցիչն, այնպես էլ յուրաքանչյուր այլ անձ (աշխատակից, ցանկացած երրորդ կողմ), ով համաձայն համապատասխան ակտի՝ իրավունք ունի ներկայացնելու տվյալ իրավաբանական անձին:

Ինչ վերաբերում է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձին, ապա այդպիսի անձ կարող է համարվել անձը, որն՝

- ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,
- հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ:

Պատասխանատու ֆիզիկական անձի և իրավաբանական անձի գործունեության միջև կապը

Սովորաբար այս կապը սահմանվում է «շահերի» չափանիշով, համաձայն որի՝ պատասխանատուի իրավախախտումը կարող է վերագրվել իրավաբանական անձին, եթե դա կատարվել է առնվազն մասամբ՝ իրավաբանական անձի շահերից ելնելով:

Այս տրամաբանությունն ընկած է նաև ՀՀ քրեական օրենսգրքի հիմքում, համաձայն որի՝ իրավաբանական անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության, եթե ֆիզիկական անձն իրավախախտում իրականացնելիս հանդես է գալիս իրավաբանական անձի անունից և գործում ի շահ իրավաբանական անձի կամ իր հանցավոր նպատակների համար օգտագործում է իրավաբանական անձը:

ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով՝ հանցանքը համարվում է ի շահ իրավաբանական անձի կատարված, եթե հանցագործության նպատակներից է եղել անմիջականորեն իրավաբանական անձի համար օգուտներ առաջացնելը, որոնք կարող են լինել ինչպես գույքային, այնպես էլ ոչ գույքային, այդ թվում՝ եկամուտների ավելացում, ծախսերի կամ կորուստների նվազեցում, իրավական ակտերով սահմանված պատասխանատվությունից ազատում, իրավունքների ձեռք բերում կամ պարտականություններից ազատում:

Կորպորատիվ քրեական պատասխանատվության բոլոր մոդելները ձգտում են հստակ տարբերակում մտցնել իրավախախտի մասնավոր նպատակներին ծառայող



հանցագործությունների և իրավաբանական անձի շահերին միտված հանցագործությունների միջև: Իրավաբանական անձը պատասխանատվություն չի կրում պատասխանատու ֆիզիկական անձի կողմից կատարված հանցանքի համար, եթե դա կատարվել է տվյալ անձի մասնավոր շահերից ելնելով:

Միաժամանակ, պատասխանատու ֆիզիկական անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի բացառում նույն հանցագործության համար իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը, մինչդեռ ֆիզիկական անձին քրեական պատասխանատվությունից ազատելը հիմք չէ իրավաբանական անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

Օրինակ, եթե հանցանքը կատարվել է իրավաբանական անձի տնօրենի կողմից և իր բնույթով այնպիսին է, որ առանձին քրեական պատասխանատվություն է սահմանում և՛ տնօրենի համար՝ որպես ֆիզիկական անձի, և՛ իրավաբանական անձի համար, ապա այդ հանցանքի համար տնօրենին քրեական պատասխանատվության ենթարկելը չի նշանակում, որ իրավաբանական անձն այլևս չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության: Ե՛վ տնօրենը, և՛ իրավաբանական անձը կենթարկվեն քրեական պատասխանատվության: Ինչ վերաբերում է տնօրենի՝ որպես ֆիզիկական անձի հանցագործության համար քրեական պատասխանատվությունից ազատվելու դեպքին, ապա նշվածը հիմք չի կարող հանդիսանալ իրավաբանական անձին քրեական պատասխանատվությունից ազատելու համար:

Պատասխանատու ֆիզիկական անձի վարքագիծը

ՀՀ քրեական օրենսգրքի տրամաբանությամբ՝ քրեական պատասխանատվության ծագման համար էական նշանակություն ունի պատասխանատու ֆիզիկական անձի վարքագիծը: Անշուշտ, իրավաբանական անձի պատասխանատվությունը ծագում է, եթե պատասխանատուի գործողությունները բովանդակում են հանցագործության տարրեր: Իրավաբանական անձանց պատասխանատվությունը ծագում է նաև՝

- երբ պատասխանատու անձը դրդում, հրահրում է հանցագործության՝ հրահանգներ տալու, հանցագործությանն աջակցելու, այսինքն՝ ակտիվ ոչ իրավաչափ վարքագիծ որդեգրելու միջոցով,
- կամ, երբ պատասխանատու անձը հանդուրժում է հանցավոր վարքագիծը, չի վերահսկում և հսկում իր աշխատակիցներին, այսինքն՝ ձևավորում է թողտվության միջավայր՝ ստանձնելով պասիվ վարքագիծ:

Իրավական համապատասխանությունն ապահովելու կարողությունը



Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի՝ իրավաբանական անձին քրեական պատասխանատվության ենթարկելու մեկ այլ պայման է դրա անկարողությունն ապահովելու իր իրավական համապատասխանությունը, որը հնարավորություն է տվել իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձին, իրավաբանական անձին ներկայացնող անձին կամ իրավաբանական անձի աշխատողին կատարել հանցանք:

Իրավախախտումները, որոնց վրա տարածվում է քրեական պատասխանատվությունը

Կորպորատիվ պատասխանատվության ռեժիմները տարբերակող մեկ այլ կարևոր հանգամանք է քրեական պատասխանատվության հատուկ կամ ընդհանուր բնույթը: Առաջինի դեպքում պատասխանատվությունը սահմանափակվում է միայն օրենսդրությամբ հատուկ նշված իրավախախտումներով, իսկ երկրորդը վերաբերում է ցանկացած իրավախախտման:

Ընդհանուր պատասխանատվության մոտեցումը գերակայում է ընդհանուր իրավունքի երկրներում, մինչդեռ քաղաքացիական իրավունքի երկրները պատմականորեն ձգտել են կիրառել հատուկ պատասխանատվության մոտեցումը: Երկրորդ մոտեցումը գերակայում է նաև Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների մեծ մասում, սակայն հինգ երկրներում՝ Բոսնիա և Հերցեգովինայում, Խորվաթիայում, Սոնտենեգրոյում, Ռումինիայում և Սերբիայում, քրեական կորպորատիվ պատասխանատվությունը կարող է ծագել քրեական օրենսգրքով նախատեսված բոլոր իրավախախտումների համար⁸:

Ընդհանուր պատասխանատվության մոտեցումն ընտրվել է նաև Հայաստանում, քանի որ ՀՀ քրեական օրենսգիրքը չի բովանդակում կոնկրետ ձևակերպում կամ իրավախախտումների ցանկ, որոնց համար իրավաբանական անձինք կարող են ենթարկվել քրեական պատասխանատվության, այսինքն՝ օրենսգիրքը տարբերակում չի դնում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից կատարվող իրավախախտումների միջև: Սակայն ողջամտության տեսանկյունից և հաշվի առնելով իրավաբանական անձանց առանձնահատկությունները՝ կարելի է եզրակացնել, որ իրավաբանական անձանց նկատմամբ քրեական հետապնդումների իրականացումը մեծապես վերաբերելի է տնտեսական և կոռուպցիոն հանցագործություններին:

Իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցները

⁸ OECD Anti-Corruption Network for Eastern Europe and Central Asia. Liability of Legal Persons for Corruption in Eastern Europe and Central Asia. 2015.



Իրավաբանական անձի նկատմամբ պատիժ կամ ներգործության միջոց նշանակելու կարևոր սկզբունքներից է մեղադրյալ իրավաբանական անձի տնտեսական կայունությունը հաշվի առնելը: Այս սկզբունքն ընդունված է շատ երկրներում և ողջամիտ է այնքանով, որ պատժի նպատակը ոչ թե իրավաբանական անձի գործունեության դադարեցումն է, այլ դրան օրինական գործունեության դրդելը: Պատիժը պետք է լինի ոչ միայն բավականաչափ զսպող, այլև արդյունավետ և համաչափ: Այս նպատակին հնարավոր չէ հասնել, եթե բռնագանձվում է իրավաբանական անձի ակտիվների զգալի մասը: Դատարանը պետք է հաշվի առնի անմեղ երրորդ անձանց, մասնավորապես՝ աշխատակիցների, բարեխիղճ մասնակիցների, բաժնետերերի կամ փայատերերի օրինական շահերը ևս:

Ի թիվս նշյալի՝ ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է մի շարք հանգամանքներ, որոնք պետք է հաշվի առնվեն իրավաբանական անձի նկատմամբ ներգործության միջոց նշանակելիս: Դրանք են՝

- կատարված հանցանքի բնույթն ու վտանգավորության աստիճանը,
- հանցագործությամբ պատճառված վնասի բնույթն ու չափը,
- հանցագործությանը նպաստող պատճառներն ու պայմանները,
- հանցագործության հետևանքների չեզոքացմանն ուղղված իրավաբանական անձի ձեռնարկված միջոցները,
- իրավաբանական անձը ներկայացնող ֆիզիկական անձանց գործողությունները,
- իրավաբանական անձի բարեխիղճ մասնակիցների, բաժնետերերի կամ փայատերերի օրինական շահերը, որոնք չգիտեին և չէին կարող իմանալ կատարվող կամ կատարված հանցանքի մասին,
- իրավաբանական անձի դատվածությունը,
- իրավաբանական անձին բնութագրող հանգամանքները, այդ թվում՝ ֆինանսական շուկայում ունեցած դերը:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցները նշանակելիս դատարանը որպես առանձին հանգամանք պետք է դիտարկի ՀՀ կենտրոնական բանկի կարծիքը, որը վերաբերում է ֆինանսական կազմակերպության նկատմամբ ներգործության տվյալ միջոցի կիրառմանը և դրա հետևանքներին: Կարծիքի անհրաժեշտությունը հիմնավորվում է երկրի ֆինանսական համակարգի կայունությամբ և ներգործության միջոցով դրանում հարուցվող հնարավոր ռիսկերով:



ՀՀ քրեական օրենսգրքով իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցներն են՝

- 1) տուգանքը,
- 2) գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը,
- 3) հարկադիր լուծարումը,
- 4) ՀՀ-ում գործունեություն իրականացնելու արգելքը:

Հարկ է նշել, որ իրավաբանական անձի նկատմամբ կարող են նշանակվել մեկից ավելի ներգործության միջոցներ:

Տուգանք

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն նախատեսող օրենսդրություններում տուգանքը որպես ներգործության միջոց կիրառելու առնչությամբ գոյություն ունի հետևյալ երկու հիմնական մոտեցումը՝

- **Փակ համակարգ.** տուգանքի նվազագույն և առավելագույն չափը կամ առնվազն առավելագույնը սահմանվում է օրենքով՝ որպես ֆիքսված գումար կամ բանաձև, որի հիման վրա հաշվարկվում է տուգանքի չափը (օրինակ՝ հաշվարկը կարող է կատարվել նվազագույն աշխատավարձի նկատմամբ):
- **Բաց համակարգ.** տուգանքի չափը սահմանվում է մի քանի գործոնների հաշվարկով՝ կախված կոնկրետ հանցանքից (օրինակ՝ ստացված օգուտը) կամ մեղադրյալից (օրինակ՝ ընկերության շրջանառությունը)⁹:

Մի շարք երկրներում կիրառություն են գտել նաև այդ համակարգերի տարրերը համադրող տարբերակները:

Նման երկրներից է Հայաստանը: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի՝ տուգանքի չափը և այն նշանակելու հնարավորությունը որոշում է դատարանը: Օրենսգրքով կարգավորվում է միայն տուգանքի առավելագույն շեմը: Այն չի կարող գերազանցել հանցանքն ավարտելուն նախորդած 1 տարվա ընթացքում իրավաբանական անձի համախառն եկամտի 20 տոկոսը:

⁹ Технический документ: Сравнительный анализ ответственности юридических лиц (корпоративной ответственности) за преступления коррупционной направленности. Совместный проект Европейского Союза и Совета Европы «Защита прав предпринимателей в РФ от коррупционных практик». 2015.



Տուգանքը նշանակելիս դատարանն՝ ի թիվս այն հանգամանքի, որ դրա չափը չի կարող ուղղակիորեն հանգեցնել իրավաբանական անձի սնանկացման կամ լուծարման, պետք է հաշվի առնի նաև հետևյալ գործոնները՝

- հանցագործության ծանրությունը,
- հանցագործությամբ ստացված գույքային կամ ոչ գույքային բնույթի օգուտները,
- իրավաբանական անձի գույքային դրությունը,
- իրավաբանական անձի՝ եկամուտ ստանալու հնարավորությունը կամ նրան պատկանող այնպիսի գույքի առկայությունը, որի վրա կարող է բռնագանձում տարածվել:

Մեղադրյալ իրավաբանական անձի տնտեսական կայունության ապահովման հիմնարար սկզբունքով առաջնորդվելով՝ դատարանը կարող է մեղմացնել տուգանքի վճարման կարգն ու պայմանները: Օրինակ՝ այն դեպքում, երբ իրավաբանական անձն ի վիճակի չէ անհապաղ և ամբողջությամբ վճարելու նշանակված տուգանքը, վերջինիս սնանկացումից կամ լուծարումից խուսափելու համար դատարանը սահմանում է վճարման ժամկետ, որն առավելագույնը կարող է լինել 3 տարի, կամ թույլատրում է տուգանքը վճարել մաս-մաս՝ նույն ժամկետում: Կամ, եթե տուգանքը նշանակելուց հետո իրավաբանական անձը նյութական վիճակի վատթարացման հետևանքով զրկվում է տուգանքը վճարելու հնարավորությունից, ապա դատարանը իրավաբանական անձի միջնորդության հիման վրա կարող է երկարաձգել տուգանքի վճարման սահմանված վերջնաժամկետը առավելագույնը 3 տարով:

Ինչ վերաբերում է իրավաբանական անձի կողմից տուգանքը վճարելուց խուսափելուն, ապա այս դեպքում դատարանը կարող է որոշում կայացնել բռնագանձելու տուգանքի չափին համարժեք գույք: Իսկ նման գույքի բացակայության դեպքում դատարանը կարող է փոխարինել քրեաիրավական ներգործության միջոցը. տուգանքը փոխարինվում է գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցմամբ:

Օրենսգիրքը նախատեսում է, որ տուգանքի կիրառմամբ պետական բյուջեում գոյացած միջոցները տարվա կտրվածքով կարող են ուղղվել սոցիալական ծրագրերի իրականացմանը: Վերջիններիս շահակիցներն են հանցագործություններից տուժողները, իսկ ծրագրերը նպատակ են հետապնդում փոխհատուցել նրանց պատճառված վնասները: Որպես սոցիալական ծրագրերի պատասխանատու՝ ՀՀ քրեական օրենսգիրքը ճանաչում է պետությանը՝ միաժամանակ նախատեսելով, որ փոխհատուցման սկզբունքներն, առաջնահերթությունները, փոխհատուցման կարգը և չափը սահմանվում են կառավարության կողմից: Հետևաբար, այս դրույթի իրավակիրարկման հնարավորությունը պայմանավորվում է



համապատասխան նորմատիվային ակտերի ընդունմամբ: Միաժամանակ իրավանորմի կիրարկման իրատեսականությամբ պայմանավորված՝ տարակուսանքների տեղիք է տալիս օրենսգրքում կիրառված «կարող է» արտահայտությունը:

Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը

Թեև դրամական պատժամիջոցները հանցավոր մտադրություն ունեցող իրավաբանական անձանց համար պատժի հիմնական գործիքներն են, ժամանակի ընթացքում ի հայտ են եկել այլ միջոցներ ևս: Ամենից հաճախ այդ միջոցները ներառում են կորպորատիվ իրավունքների տարբեր սահմանափակումներ:

Սահմանափակումների/արգելքների բավական երկար ցանկ նախատեսված է օրինակ՝ Հյուսիսային Մակեդոնիայի քրեական օրենսդրությամբ, համաձայն որի՝ դատապարտված իրավաբանական անձը կարող է ենթարկվել հետևյալ ներգործության միջոցներից որևէ մեկին կամ մի քանիսին միաժամանակ՝

- թույլտվություններ, լիցենզիաներ, կոնցեսիաներ կամ հատուկ օրենքներով նախատեսված այլ իրավունքներ ստանալու արգելք.
- պետական մրցույթներին մասնակցելու, պետական գնումների պայմանագրերի և պետական-մասնավոր համագործակցության պայմանագրերի կնքման արգելք.
- նոր իրավաբանական անձանց ստեղծման արգելք.
- սուբսիդիաներից և այլ արտոնյալ վարկերից օգտվելու արգելք.
- տրված թույլտվությունների, լիցենզիաների, կոնցեսիաների կամ հատուկ օրենքներով նախատեսված այլ իրավունքների չեղարկում.
- գործունեության որոշակի տեսակով զբաղվելու ժամանակավոր կամ մշտական արգելք¹⁰:

ՀՀ քրեական օրենսգրքում հիշյալ արգելքներից նախատեսված է գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը, որն իրենից ներկայացնում է տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական կամ այլ գործունեության որոշակի տեսակով կամ մի քանի տեսակներով զբաղվելու արգելք: Թերևս, սա չի բացառում սահմանափակումների կամ արգելքների այլ տեսակների կիրառման հնարավորությունն այլ օրենքներով, օրինակ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով:

¹⁰ OECD Anti-Corruption Network for Eastern Europe and Central Asia. Liability of Legal Persons for Corruption in Eastern Europe and Central Asia. 2015.



ՀՀ քրեական օրենսգրքով գործունեության որոշակի տեսակով զբաղվելու արգելքի ժամանակային միջակայքը 2 ամսից մինչև 2 տարի է:

Գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը նշանակվում է գործունեության այն տեսակի համար, որի իրականացման ընթացքում կատարվել է հանցանքը կամ որի իրականացման հետ կապված է եղել հանցագործությունը: Ներգործության այս միջոցը նշանակելիս դատարանը ևս պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ դա չի կարող ուղղակիորեն հանգեցնել իրավաբանական անձի սնանկացման:

Եթե իրավաբանական անձը խուսափում է և շարունակում զբաղվել արգելված գործունեության տեսակով, ապա ներգործության այդ միջոցը փոխարինվում է բացառիկ միջոցով՝ հարկադիր լուծարմամբ:

Քրեաիրավական ներգործության այս միջոցը չի կարող նշանակվել՝

- հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի նկատմամբ,
- այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց գործունեությունը դադարեցնելու համար Սահմանադրությամբ կամ այլ իրավական ակտերով հատուկ կարգ է սահմանված:

Հարկադիր լուծարում

Կորպորատիվ պատժի մեկ այլ տեսակ է իրավաբանական անձի հարկադիր լուծարումը: Սա բացառիկ քրեաիրավական ներգործության միջոց է, որն իրավաբանական անձի նկատմամբ նշանակվում է առանձնապես ծանր հանցանքի համար և դրա հետագա գործունեությունը շարունակելու անթույլատրելիության մասին հանգամանքների առկայության դեպքում:

Միջազգային պրակտիկայում իրավաբանական անձի դատական լուծարումը նշանակվում է, եթե իրավաբանական անձը ստեղծվել է անօրինական նպատակներով կամ նրա գործունեությունն ամբողջությամբ կամ հիմնականում ուղղված է եղել հանցագործությունների կատարմանը:

Ինչպես արդեն նշվել է վերևում, Հայաստանում հարկադիր լուծարումը հնարավոր է նաև, եթե դատապարտված անձը բարեխղճորեն չի կատարել իր նկատմամբ նշանակված ներգործության միջոցը:

Հայաստանում հարկադիր լուծարումը չի կարող նշանակվել՝

- օտարերկրյա պետությունում ստեղծված իրավաբանական անձի նկատմամբ,



- հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի նկատմամբ,
- այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց գործունեությունը դադարեցնելու համար Սահմանադրությամբ կամ այլ իրավական ակտերով հատուկ կարգ է սահմանված:

ՀՀ-ում գործունեություն իրականացնելու արգելքը

ՀՀ-ում գործունեություն իրականացնելու արգելքը կարող է նշանակվել միայն օտարերկրյա պետությունում ստեղծված իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք իրենց գործունեությունն են իրականացնում ՀՀ-ում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ միջազգային պայմանագրերով: Ներգործության այս միջոցը կարող է նշանակվել միայն ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար:

Իրավաբանական անձանց դատվածությունը

Քրեական պատասխանատվության ենթարկվելու դեպքում իրավաբանական անձինք ֆիզիկական անձանց նման ունենում են դատվածություն:

Դատվածության մարված լինելու ժամանակահատվածը պայմանավորվում է կատարված հանցավոր արարքի ծանրությամբ:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի՝ իրավաբանական անձի դատվածությունը մարվում է՝

- ոչ մեծ ծանրության հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 1 տարի հետո,
- միջին ծանրության հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 2 տարի հետո,
- ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 3 տարի հետո,
- առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքում, եթե չի նշանակվել հարկադիր լուծարում կամ ՀՀ-ում գործունեություն իրականացնելու արգելք՝ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց 5 տարի հետո:



Այն պարագայում, երբ մինչև դատվածության մարվելը իրավաբանական անձը թույլ է տալիս նոր հանցավոր արարք, ժամկետը սկսում է հաշվվել նոր հանցագործության համար նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի ժամկետը լրանալուց հետո:

Իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառելը և ազատելը

ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը բացառելու, ինչպես նաև դրանից ազատելու իրավանորմեր:

Առաջին դեպքում իրավաբանական անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե իրավաբանական անձի մասնակիցները, բաժնետերերը կամ փայատերերը ձեռնարկել են ողջամտորեն անհրաժեշտ միջոցներ պատասխանատու ֆիզիկական անձանց կողմից հանցանքի կատարումը կանխելու նպատակով, սակայն հանցագործությունը կանխելու իրական հնարավորությունը բացակայել է:

Ինչ վերաբերում է երկրորդին, ապա իրավաբանական անձն ազատվում է պատասխանատվությունից այնքանով, որքանով իրավաբանական անձի նկատմամբ իրենց էությանը կիրառելի են օրենսգրքով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատման հետևյալ հիմքերը՝

- հանցագործության կատարումից կամովին հրաժարումը,
- գործուն գղջալը,
- տուժողի և հանցանքը կատարած անձի հաշտությունը,
- վաղեմության ժամկետն անցած լինելը:

Իրավաբանական անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից նաև՝

- երբ վերացրել է հանցանքի կատարմանը նպաստող պատճառները և պայմանները,
- հատուցել է պատճառած վնասը և հարթել ենթադրյալ հանցագործության այլ հետևանքները,
- վերադարձրել է հանցանքի կատարման արդյունքում ձեռք բերված գույքը, այդ թվում՝ ստացված եկամուտը:

Բերված իրավանորմերի մի մասն ունի իրավախախտումը կանխարգելող, իսկ մյուս մասը՝ դրա ուղղմանը միտված բնույթ: Դրանց կիրառելիությունն իրավաբանական անձի նկատմամբ ապահովելու համար էական նշանակություն ունեն տվյալ իրավաբանական անձի պատշաճ շրջահայացությունը և նրա կողմից համապատասխանության ու բարեվարչության մշակույթի գնահատումն, ինչը գործնականում արտահայտվում է կազմակերպությունում



համապատասխանության արժանահավատ և գործուն ծրագրի առկայությամբ, որը մի կողմից պատիժը մեղմացնելու, իսկ մյուս կողմից հանցագործությունը կանխելու միջոց է:

Այս մոտեցումը կորպորատիվ պատասխանատվության ռեժիմը դարձնում է ն՛ արդար, ն՛ արդյունավետ, քանի որ դրդում է իրավաբանական անձանց ոչ միայն մշակել և գործարկել համապատասխանության ծրագրեր, այլև համագործակցել պետական իրավասու մարմինների հետ՝ պատշաճ հիմքեր ապահովելով համապատասխանության ծրագրերի բարելավման համար: Բացի այդ, համապատասխանությունը դուրս է գալիս օրենսդրական պահանջների շրջանակից, քանի որ դա արտացոլում է իրավաբանական անձի կորպորատիվ մշակույթը: Առավել արդյունավետ է ոչ թե բացառապես արգելքների և պատժամիջոցների վրա հիմնված մշակույթը, այլ այն, որտեղ իրավաբանական անձի կառավարման բոլոր մակարդակներում բոլորը հետևում են իրենց իրավասություններին և վարքագծին վերաբերող սահմանափակումներին, նույնիսկ եթե ոչ ոք չի վերահսկում իրենց գործունեությունը:

Իրականում համապատասխանության ոչ մի ծրագիր ի գործու չէ կանխել բոլոր խախտումները: Սակայն իրավախախտման ռիսկի ի հայտ գալու դեպքում համապատասխանության գործող ծրագրի առկայության վերաբերյալ պատշաճ ապացույցները հնարավորություն են տալիս իրավաբանական անձին ցույց տալ, որ իրավախախտման պատասխանատուն ոչ թե ինքն է, այլ համապատասխանության կանոններն ու կառուցակարգերը շրջանցած պատասխանատու ֆիզիկական անձը:

Պատշաճ շրջահայացության մոտեցումը ջատագովվում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից և պատահական չէ, որ այն իր տեղն է գտել մի շարք երկրների, այդ թվում՝ ՀՀ օրենսդրության մեջ:

Վերջաբանի փոխարեն

Անկասկած, ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության իրավանորմերի ամրագրումը լուրջ նորամուծություն է, որի իրավակիրառումը բազմաբովանդակ հարցերի տեղիք է տալու:

Հետևաբար, Հայաստանի գործարար հատվածն առնվազն պետք է տեղեկացված լինի ռիսկերի և հնարավորությունների մասին: Ռիսկերը վերաբերում են ոչ միայն ներգործության միջոցների կիրառմանը, այլև իրավաբանական անձի հեղինակությանը: Միգուցե ներկայումս Հայաստանի գործարար միջավայրում հեղինակության ռիսկի նշանակությունը թերագնահատվում է, սակայն չի բացառվում օտարերկրյա, միջազգային գործընկերների, ներդրողների ու այլ շահակիցների կողմից:



Ցանկացած խնդրի լուծման կարևորագույն քայլը խնդիրը ճանաչելն է: Այն, որ համապատասխանության խնդիրն առկա է հայաստանյան ընկերությունների մեծամասնության մոտ, քննադատություն չէ, այլ խնդրի ճանաչում: Ողջախոհության տեսանկյունից իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության իրավակարգավորումներն ընկերություններին պետք է դրդեն դեպի պատշաճ շրջահայացության և համապատասխանության, արդյունքում՝ սեփական կառավարման համակարգի բարելավման՝ կարգախոսով «Ապահովի՛ր համապատասխանությունդ, ձևավորի՛ր բարեվարքության կորպորատիվ մշակույթ և ապրի՛ր հանգիստ»:

Այս առումով [Կորպորատիվ Կառավարման Կենտրոնն](#) առաջարկում է իր գործնական աջակցությունը: Ներկայումս Կենտրոնն առաջնորդում է Հայաստանի առաջին հավաքական հակակոռուպցիոն նախաձեռնությունը՝ [Բիզնեսի բարեվարքության ակումբը](#), և վերջինիս շրջանակներում նպաստում լավ կառավարման արժեքը գնահատող ընկերությունների և դրանց պատասխանատուների կարողությունների զարգացմանը: Հարցերի դեպքում՝ Կենտրոնը բաց է համագործակցության և աջակցության համար: